

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «-----» 2025թ.

N --- - Ա

### ՈՐՈՇՈՒՄ

#### ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ, 82-րդ հոդվածի 4-րդ մասով՝

#### **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական ծառայություն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով ձեռք բերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, «Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանված բաց մրցույթի կիրառմամբ գնում կատարելու ձևով, կազմակերպել աուդիտորական ծառայությունների ձեռք բերման գործընթացը՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ԱՎԻՆՅԱՆ**

2025 թ. \_\_\_\_\_ «    »

Երևան

**Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն   Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր**

**Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների  
հաշվեքննության (աուդիտի) ծառայությունների**

Պետք է իրականացվեն Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտորական ծառայություններ: Աուդիտորական ծառայությունների ավարտման վերջնաժամկետ է սահմանվում Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելուց հետո 21-րդ օրացույցային օրը ներառյալ: Աուդիտը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ա) Աուդիտ անցկացնելու ընթացքում անհրաժեշտ է իրականացնել՝

1) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության գնահատում,

2) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսական հնարավորությունների օգտագործման գնահատում,

3) աուդիտի ենթարկվող օբյեկտի բնականոն աշխատանքը խանգարող արհեստական խոչընդոտների ու օրենսդրությանը չհամապատասխանող գործողությունների բացահայտում:

Աուդիտորական հաշվետվությունում ներկայացված տեղեկատվությունը պետք է լինի հստակ, համառոտ և ամբողջական՝ բացառելով որևէ փաստացի անճշտություն: Աուդիտորական հաշվետվությունում ներառվում են նաև աուդիտորական ապացույցների քանակական հաշվարկներն ու գնահատականները, ինչպես նաև հղումներ օրենսդրության պահանջներին:

բ) Աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ աուդիտի ոլորտում, ունենան առնվազն 7 աշխատակից, ովքեր ունեն առնվազն 5 տարվա աուդիտորական աշխատանքային փորձ և որոնցից առնվազն 2-ը ունեն միջազգային որևէ որակավորում:

## **Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն   Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր**

### **Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների հաշվեքննության (աուդիտի) ծառայությունների**

Պետք է իրականացվեն Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտորական ծառայություններ: Աուդիտորական ծառայությունների ավարտման վերջնաժամկետ է սահմանվում Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելուց հետո 21-րդ օրացույցային օրը ներառյալ: Աուդիտը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ա) Աուդիտ անցկացնելու ընթացքում անհրաժեշտ է իրականացնել՝

1) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության գնահատում,

2) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսական հնարավորությունների օգտագործման գնահատում,

3) աուդիտի ենթարկվող օբյեկտի բնականոն աշխատանքը խանգարող արհեստական խոչընդոտների ու օրենսդրությանը չհամապատասխանող գործողությունների բացահայտում:

Աուդիտորական հաշվետվությունում ներկայացված տեղեկատվությունը պետք է լինի հստակ, համառոտ և ամբողջական՝ բացառելով որևէ փաստացի անճշտություն: Աուդիտորական հաշվետվությունում ներառվում են նաև աուդիտորական ապացույցների քանակական հաշվարկներն ու գնահատականները, ինչպես նաև հղումներ օրենսդրության պահանջներին:

բ) Աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ աուդիտի ոլորտում, ունենան առնվազն 7 աշխատակից, ովքեր ունեն առնվազն 5 տարվա աուդիտորական աշխատանքային փորձ և որոնցից առնվազն 2-ը ունեն միջազգային որևէ որակավորում:

## **ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

### **«ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ կետի Երևան քաղաքի բյուջեի կատարման վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով ավագանին պարտավոր է սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որի աշխատանքային ռեսուրսները պետք է համապատասխանեն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի հ. 1-Ն որոշման 83.1 կետին:

Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը ավագանուն պետք է ներկայացվի մինչև 2026 թվականի մարտի 1-ը, իսկ ծառայությունը պետք է մատուցվի 2026 թվականին և վճարումն իրականացվի Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեից՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում, ուստի աուդիտորական ծառայություններ ներգրավելու նպատակով ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝           Տ. ԱՎԻՆՅԱՆ**